<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼՊՈՒՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը կանցկացվի Երևանում՝ Հայաստանի շախմատի ակադեմիայում (Շևչենկո 34), 2024 թվականի **մարտի 22-ին՝ ժամը 16:00-ին**, ըստ հետևյալ տարիքային խմբերի՝

Տղաներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ,

Աղջիկներ

Ա. մինչև 10 տարեկան շախմատիստուհիներ,

Բ. մինչև 14 տարեկան շախմատիստուհիներ,

Գ. մինչև 18 տարեկան շախմատիստուհիներ,

**Մասնակիցների քիչ քանակի դեպքում խմբերը կմիացվեն:*

Բոլոր մրցաշարերը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը համարվում է ընտրական փուլ Եվրոպայի արագ և կայծակնային շախմատի մրցաշարի համար:

Մրցաշարերում 1-ից 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն մեդալներով և պատվոգրերով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն՝

1. Հատված Բուխհոլցի (-1) գործակցի,
2. Բուխհոլցի ,
3. Ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
4. Ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի

Առաջնության յուրաքանչյուր խմբի 1-ից 6-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք կստանան սեփական միջոցների հաշվին մասնակցելու Եվրոպայի արագ և կայծակնային շախմատի առաջնությանը, որը տեղի է ունենալու 2024 թվականի օգոստոսի 15-ից 20-ը Չեխիայի Պրահա քաղաքում:

Հայաստանի պատանիների և աղջիկների շախմատի առաջնության եզրափակիչ մրցաշարի մասնակիցները նույնպես իրավունք ունեն սեփական միջոցների հաշվին մասնակցելու Եվրոպայի արագ և կայծակնային շախմատի առաջնությանը:

<u>Մասնակիցներ</u>

Մրցաշարին իրավունք ունեն մասնակցելու այն շախմատիստները, ովքեր ունեն՝

Տղաներ

Ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ առնվազն IV,

Բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ առնվազն III,

Գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ առնվազն II,

Դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ առնվազն I,

Ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ ազգային վարկանիշ,

Զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ ազգային վարկանիշ,

Աղջիկներ

Ա. մինչև 10 տարեկան շախմատիստուհիներ առնվազն IV,

Բ. մինչև 12 տարեկան շախմատիստուհիներ առնվազն III,

Գ. մինչև 14 տարեկան շախմատիստուհիներ առնվազն II,

Դ. մինչև 18 տարեկան շախմատիստուհիներ ազգային վարկանիշ,

Տղաների մինչև 14, 16, 18 և աղջիկների մինչև 18 խմբերում կհաշվարկվի միջազգային վարկանիշ

**ՖԻԴԵ-ի նույնականացման համար ունենալը պարտադիր է (FIDE ID):*

**ՖԻԴԵ-ի նույնականացման համար կարող եք ձեռք բերել այցելելով chessfed.am կայք՝ գրանցվել բաժին:*

Ժամակարգ

5 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով:

Մուտքավճար

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության մուտքավճարը ***4000 ՀՀ դրամ է:***

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնության գրանցման **վերջնաժամկետն է 2024թ. մարտի 18-ը՝ ժամը 18:00-ն:**

Գրանցվել կարող եք նաև այցելելով Հայաստանի շախմատի ֆեդերացիայի պաշտոնական կայք, գրանցվել բաժին՝ հետևյալ հղմամբ https://www.chessfed.am/am:

Գրանցումը բանկային փոխանցման դեպքում կատարվում է հետևյալ հաշվեհամարին՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԿ

ՀՎՀՀ՝ 01515033

ԲԱՆԿ՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ»

Հ/Հ՝ 1510002020290100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անվանում, անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տվյալներ, ՖԻԴԵ-ի նույնականացման համար, հեռախոսահամար:

Հարցերի դեպքում զանգահարել՝ +374 99/10 440105